


909.60 - 872191.678:



U. S. G. O.

Supervisor W. Amersbach

1907.

891-99
R-20

07. 7/31 1922

29.08.2013

60382

Նորիւմ եւ խորին երասխագիտութեամբ
ծնողացս իմ հայր Յովհաննէսին եւ մայր Եղի-
սաբերին անմոռաց յիշատակին:

Պ. Քաչորեանց:

ՆՈՒԷՐ ՓՐԿԶԻՆ:

Ոհ ինչ սարսափ տիրեց երկրին
Երբ մեր Տիւրքը մատնեցին,
Բոլոր ժողով մի խօսք էին
Թէ մեր Փրկչին խաչ հանէին:

Գտան մի մարդ պաշտէր ոսկի,

Անուն Յուդայ Իսկարովտացի,

Տուեց նա խօսք մատնել զնա,

Փոխան եւսուն ոսկի ստանայ:

Դիշեր տխուր մէջ ուրբաթի

Պարտէզ սիրուն Դիթսեմանի

Պաքտիզի մէջ կար չորս հոգի

Մէկն էր, այո՛, Աստուածուղի:

Երեք անձէն հեռանալու՝

Յիսուս գնաց հեղ քայլերով.

Մինչև դառնամ կեցէ՛ք արթուն

Չեր մտքերը չըւնի թող բուն:

Յիսուս երբ որ առանձնացաւ,

Մտքով խկոյն երկինք հասաւ.

„Թող զայս բաժակ Հայր իմ՝, ասաւ

„Մարմինս տկար հոգիս յօծար:“

Ծրնկի չորած առ հայր Ստուռած

Աղաչում էր նա մեր մեղաց

Հայր իմ՝ ըսաւ. „Ոչ է իմ կամը

„Ընդդէմ ես չեմ քո Սուրբ կամաց:

„Ուզարկեցիր դու ինձ աշխարհ

„Հիմա դառնամ առ քեզ իմ Հայր

„Կատարեցի ես քո հրաման

„Հայր ես, այն զքեզ ճանչնան,:

Վերից ի վայր նա կը դիտէր,

Հուսինը կանգնած կ'արտասուէր

Մութ էր երկինք խաւաշ աստղեր

Նրկինք պատած սև սև ամպեր:

Ո՛ւր է արև լոյսը պայծառ

Ո՛ւր է կապոյտ երկինք կամար.

Ո՛ւր է ալիք ովկիանոսի

Ո՛ւր է հողմն այս աշխարհի:

Այն ծառերի տերևները

Կը խաղային ամեն կէտի

Բայց և հիմա տխուր կանգնած

Կ'սպասեն մի վտանդի:

Ո՛ւր է թռչնոց ձայնը սիրուն

Կերգէին այդ պարտիզում

Հեռացել են այս իրիկուն

Մէկը ասես չի երևում:

Ծառէ ի ծառ տերևները

Իմացուցին մէկգմէկու,

Այս գիշերուայ տխուր լուրը

Պիտի հասնի ամեն մէկու:

Մեզ մայր ծնող հողից ինչ ոչ

Ծաղկունք խոտեր էին բուսեր,

Այդ երեկոյ կանգնած տխուր

Թափում էին յորդ արցունքներ:

Ի՞նչ էր արդեօք այդ տխրութիւն

Ինչո՞ւ սուգ էր այս բնութիւն.

Հաստատ դիտէր, ստեղծողին

Պիտ գտնէին ի վայտ խաշին:

Հրամայում էր լուսինին

Տխուր կանգնած երկնքում,

Ուղիղ դիտէ, ինչ որ տեսնէ

Գեթսեմանի պարտիզում:

Յիսուս դարձաւ աշակերտաց

Երբ որ տեսաւ գետնի վրա,

Հանդիստ բնով էին բնած

Հանդարտ ձայնով ձայնեց նոցա:

Յիսուս ասաւ երեք անձին,

„Բաւական է, որքան քնէր

„Հասաւ ժամը իմ տանջանքին

„Չորինք ծնկի մոռնր աղօթհիւր:“

„Դուք չ'զիտէք Որդի մարդոյ
„Պիտի բռնեն այս երեկոյ.
„Այն ժամանակ հանդիստ քնէր
..Ելբ չեմ լինի ես ձեզի հետ“:

Երկրորդ անգամ Յիսուս տխուր
Առանձնացաւ մէջ ծառերի.

Մեզի համար սրտից մի հուր
Վառեց. գոյնըն էր կրակի:

Վերջին անգամ գետնի վրա
Աղաչում էր նա մեր մեղաց,
„Հոգեղէն ես, դու Հայր, զթա՛
„Տուր թողութիւն մարդոց մեղաց“:

Արցունքները սուրբ երեսից
Թափւում էին դէպի գետին,
Պատճառ այն մեր մեղքերին
Մտածում էր անմեղ որդին:

Վերջին անգամ „Հայր մերն“ ասաց
Այդ սուրբ խորհուրդ երբ աւարտեց.
Յետոյ դարձաւ աշակերտաց
Երեքին էլ տեսաւ տխրած:

Ստուեր բազում երեւցան
Խիտ ծառերի մէջ պահուեցան,
Բայց նոցա մէջ անգութ Յուդան
Դեռ չէր եկել նա երևան:

Ամենքի ձեռք մի մի լապտեր
Պը փնտրէին Յիսուս մեր Տէր,
Ուր է կտէին Առքա միմեանց
Ի՞նչու Յուդան չ'երևաց:

Պարտիզի մէջ մի անկիւնում
Երբոր տեսան անմեղ որդուն.
Բազմութիւնով վրան հասան,
Յետ յետ եկան գետին ընկան:

Ասաւ Յիսուս, „Ումն էք փնտրում“
Ասին „Որդի նազովրեցուն,
„Ահա ես եմ.“ Յիսուս ասաւ.

Մի զոդ սաստիկ սրտերն ընկաւ,
Իսկ չար Յուդան մէջ բազմութեան
Մտմտալով եկաւ ատեան.
Համբոյր տուեց նա Յիսուսի.
„Սա է, դոչեց, նազովրեցի“:

Յիսուս ասաւ հանդարտ ու հոգ
„Համբուրելով դու զիս մատնես,
„Յուդա, դու ինձ լաւ ճանաչես,
„Համբոյրն ի չափ գործ կը դնես“:
Թափան դահլճք Տիրոջ վրա
Լուսին նայէ, եզիր վկայ.
Մարդիկ անգութ ինչ կը գործեն,
Ստեղծողին պիտի խաչեն:

Մարտիկի այդ տեսարան

Ցնցեց լուսնի երկնից կայան,

Պահեց երեսն ամպերի տակ

Որ չ'ըտեսնի Տիրոջ տանջանք:

Սուր սուր փշով պսակ շինեցին

Անմեղ Յիսուսի դուխ դրին,

Սաստիկ ուժով կը զարնէին

Ասա. „Դու ես Աստծոյ որդին:

Արիւնքիւսն արցունք թափէր

Սուրը երեսից դէպի գետին,

Այդ բաղմութեան մէջն ասես

Չկար մէկը որ խղճային:

Ո՞ւր էր մայրը տանէր որդուն

Անտանիկի այդ դրութիւն,

Պահէր որդուն մէջ թևերուն

Գոնէ ընէր մի օգնութիւն:

Անգութները ամեն կողմից

Դ՞ու ես թագաւոր հրէից,

Որ քանդէիր զո՛ւ մեր տաճար

Եւ շինէիր երից աւուր:

Տարան Յիսուս առ դատաւոր

Որոյ անունն էր Կայիափայ:

„Ի՞նչով է այս անձ մեղաւոր“,

Դատաւորը հարցուց նոցա:

Դա իւր կոչէ Աստծոյ որդի

Բայց մենք գիտենք նազովրեցի,

Այդ խօսքերով ամեն մէկին

Մոլորցնէ ժողովրդին:

Կայիափան ըսաւ Փրկչին.

„Ասա, զո՛ւ ես Աստծոյ որդին“,

Ասաց Յիսուս. „քո բերանով

Կասես զու ես Աստծոյ որդին“:

Կայիափան մտածելով

Որ չգտաւ յանցանք Տիրոջ

Տուեց ձեռքը ժողովրդին

Թէ մօտ տարէր Պիղատոսին:

Կը տանէին Յիսուս Փրկչին.

Ինչ նախատանք ինչ ապտակներ,

Կը զարնէին սուրը երեսին

Եւ անվայել հայհոյէին:

Այդ կէտին էլ մէկը հառաւ

Ուժով ապտակ մ' երբ որ զարկաւ

Յիսուս զարձաւ ետքն նայեց,

Անդամալոյժին ճանաչեց:

Որ քառասուն տարուց աւել,

Անկողնումը նա էր ընկել

Չորս մարդիկով բռնած բերին,

Յիսուսի մօտ դետին դրին:

Յիսուս ասաւ. ,,Դիտեմ խնդրեալ
,,Բժշկութիւն զու ինձանից,
,,Ա՛ռ մահիճ՞ զնա քո տուն
,,Բայց լաւ ճանչցիր նազովընցուն:

Ո՛հ իմ Փրկիչ ինչպէս ճանչեց ...

Բժշկեցիր նորա կեանքը.

Որ քեզ խփէ մեծ ապտակը

Ահա մարդոց ապերախտը:

Մտան սրահ Պիղատոսի

Փրկչի ձեռքերը կապել էին,

Կը բաշէին բաշքշէին,

Սանդուղից վեր կը հանէին:

Մտան դահլիճ դատարանի՝

Ո՛հ, ինչ դատ է կտրէ պիտի:

Իզուր տեղը անմեղ գառին

Պիտի մեխեն ի փայտ խաչին:

Եկաւ մի անձ նստաւ աթոռ

Որ այդ տեղաց էր դատաւոր.

Պիղատոս էր նորա անուն

Վճիռ տուող աման մէկուն:

Ո՛հ դատաւոր արդեօք զիտեա

Որի դատը պիտի դատես

Ստեղծողին երկնի երկրի

Վերջի վճիռ պիտի ետրդաս:

Պիղատոսը կանչեց ծերոց

Փարիսոցուց կեղծաւորաց

Ժողովեցան ծերեր բազում,

Մահադրնեն անմեղ Որդուն:

Ամենքի սիրտ ոխ էր պահած

Դէպի Յիսուս անզթացած

Դա իւր կոչէ Աստծոյ որդին

Կամ թագաւոր Իսրայէլին:

Այս խօսքերով Պիղատոսին

Դէպի իրանց զրաւեցին,

Ունենը օրենք մենք Մովսիսի

Այդպէս անձը խաչուի պիտի:

Պիղատոսը ասաւ Փրկչին

,,Հաստատ զո՛ւ ես նազովընցին.

,,Կամ քեզ կոչես Աստծոյ որդի

,,Կամ թագաւոր Իսրայէլին“:

Յիսուսը հեղ հանդարտ ձայնով

Պատասխանեց այս խօսքերով,

,,Դու ինձ Աստծոյ որդի կոչես,

,,Քո բերանով կը վկայես:

Պիղատոսը մտածելով

Ասաց ծերոց համոզելով

,,Չունի յանձանք իմ կարծիքով

,,Որ մենք դատենք սորան խաչով:

„Ունի՞ր օրէնք դուք պատուական,
„Թողէ՛ք այս անձ երթայ իւր տան,
„Դուք խաչեցէ՛ք այն Բարաբբան
„Որ արժան չէ ազատութեան:“

Այս խօսքն ընկաւ մէջ բազմութեան,
Բոլոր ձայնեն միաբերան
„Թող ազատուի այն Բարաբբան
„Նորա տեղը խաչենք դորան:“

Պիղատոսը մեղրմ քայլով՝
Եկաւ նա դուրս իւր ծերերով.
Դարձուց երես ժողովրդին,
„Դուք լսեցէ՛ք իմ խօսքերին:“

„Ես չեմ կարող սլատժիլ սորան
„Բնաւ յանցանք չունի վրան,
„Քննենցի եւ իմացայ
„Խօսքերի մէջ անմեղ գտայ:“

Ժողովուրդը միաբերան՝

„Դու Կայսերին չես բարեկամ,
„Կամբաստաններ դիտցած լինիս
„Հաւատա՞մ որ այս խօսքերին:“

Եկան առաջ քանի մ' ծերեր
„Ի՞նչ պէտք է մեզ ջոկ վկաներ,
„Դա իւր բերնով Աստծոյ որդու
„Անուն կուտայ ամեն մէկու:“

„Տո՛ւր մեր ձեռքը ո՞վ դատաւոր
„Մենք դատում ենք օրինաւոր,
„Մեր վզերուն դորա արին
„Այս է բաղձանք մեր սրտերուն:“

Ժողովուրդը վարից ի վեր
Կը ճուային. „խաչ հան զդա,
„Եթէ չընես չես դու մեր տէր:“
„Խաչ հան զդա, խաչ հան զդա:“

Պիղատոսը շատ զարմացած

Կը մտածէր խորասուզուած,
„Մի անմեղի արինի տակ
„Իմ խղճիս է շատ հակառակ:“

„Տարէ՛ք, հիմա դորա արին
„Ոչ թէ միայն ձեր վզերուն՝
„Այլ ձեր որդուց որդիներուն
„Թող ցաւ լինի ձեր սրտերուն:“

Պիղատոսը հրամայեց.

„Բերէ՛ք ինձ մօտ ջուր սափորով.
„Անպարտ եմ ես դորա մեղքից:“
Լուացուեցաւ երկու ձեռքով:

Սանդուղնիւրից դէպի ի վայր
Քաշեն Յիսուս սէ, չարաչար.
Փրկչի երեսը արինախառ
Արցունք թափէր մեղի համար:

Յիսուս տանին արագ արագ
Հասան մի մեծ հրապարակ,
Որ այդ տեղից լեռ Գողգոթան
Կը երևնար գաղաթ միայն:

Անփոյտ վայտից ծանր մի խաչ,

Մօտը բերին Փրկչի առաջ,

Այս է խաչդ զբեզ միայն

Պիտի տանիս մինչ Գողգոթան:

Երևը հսկայ մարդիկներով

Խաչը դրին Փրկչի ուսին,

Կը զարնէին մտրակներով

„Զբեզ փրկէ մար ձեռքերէն:“

Ո՛ւր են արգեօք աշակերտներ,

Ինչո՞ւ նորա չէին օգնիր,

Իրանց Փրկչի խաչը ուսին,

Աչքերովը կը տեսնէին:

Բայց ինչ արգեօք կը լան ընել,

Հազարաւոր ուսերիմներ

Բազմութիւնով կը տանէին

Յիսուս Փրկչին նախատէին:

Պետրոս ասաւ Յովհաննէսին,

„Զուտով հասի՞ր մայր ծնողին

„Դո՞նէ տեսնի վերջի կէտին

„Եւր անգրանիկ սուրբ Միածնին:“

Ու՛ր է մայրը, ո՛ւր է պաշտպան

Ծանր խաչին օգնէ միայն,

Ուժը կտրաւ մար Փրկչին,

Ո՛հ չի կարող տանիլ խաչին:

Ընկաւ դետին խաչը ուսին,

Սուրբ երեսը եկաւ հողին

Դահլճները կը պոռաին

„Ելի՛ր շատ կալ Գողգոթային:

Պանդնիր ոտքի շուտով դնանք

Այս օր հասաւ ուշ կը մնանք

Անգութները այս խօսքերով,

Կը գալնէին բռունցքներով:

Գողգոթայով Յիսուս Փրկչի՛

Պանգնաւ ոտքի չիք կարեկից.

Թշնամիները շուրջը պատած

Մարդասպանի դասն են դասած:

Քաղաքիցը Երբ դուրս ելան

Ուղղուեցին դէպ Գողգոթան,

Մի իւմբ կանայք Երբոր տեսան

Փրկչի վրա լաց սկսան:

Յիսուս Երբոր կաճանց տեսաւ

Մեղմը ձայնով նորանց ասաւ.

„Մի լայք կանաչք դուր իմ վրա,

„Լացէ՛ք ձեր և որչեւց վրա:“

Ահա հեռուից մայր լալագին

Կուգայ գրկել իւր սիրելին.

„Ախ իմ պայծառ լոյս անարատ

„Թշնամու ձեռք դու մատնուար:“

Աչքերիցը արցունքները

Գլորում էին կուրծքից ի վար,

Հատիր մայրիկ, մի ուշանար,

Օգնես որդուդ ընես մի ճար:

Ոհ ծանրացաւ քայլ ջնողին

Երբոր տեսաւ մէջ ամբոխին,

Ուզեց հասնել գրկել որդին

Ուշաթափուաւ ընկաւ գետին:

Ահա գութը հի մայրական,

Որքան մեծ է և անսահման

Հասաւ մէջը ժողովրդեան

Տեսաւ խաշը որդուն վրան:

Ուժից կտրած. մայր ծնողին

Ուզեց օգնել ծանր խաշին,

Բացեց թևերը հի լալագին

Ընկաւ ոտըը նա մեր Փրկչին:

„Ոհ իմ պայծառ լոյս արեգակ,

„Հոգւոց բժիշկ դու իմ որդեակ

„Ոհ ասացէք ինչ է յանցանք

„Որ տալիս էք այսպէս տանջանք:“

Կին մը հասաւ. նա հեռուից

Ձեռքը բռնած իր լալագից,

Վերոնիկա նորա անուն

Որպէստէ խիղճն էր արթուն:

Աչքերիցը թափէր արցունք

Ուժով ճեխեց զահիճներուն

Հասաւ սրբեց բրտինք Փրկչի,

էր խառնուած հետ արինի:

Ծանրութիւնը խաշափայտին

Ուժից ձգեց մէր Արարչին

Երկրորդ անգամ ընկաւ գետին

Աւաղ Յիսուս իմ միածին:

Որքան ցաւ է մօր մը համար

Կը տանջէին առաջ աչաց.

Տեսնել որդուն. չընել հնար

Սուր սուր գամով սիրան էր խոցուած:

Երկրորդ անգամ խաշն ուսին

Անդուր զահիճը երբոր տուին.

„Տար քիչ մնաց Գողգոթային:“

Այս խօսքերը կը ճուային:

Ամէն կողմից ծիծաղէին,

Սուրբ երեսին կը թքնէին.

„Եթէ դու ես Աստուածորդին

Ձրեղ փրկէ մեր ձեռքերէն:“

1001
2854

Հեզ և խոնարհ անմեղ որդին
Տանիր խաչը ողջ աշխարհին.
Ծանր էր այն մեծ անագին

Ոչ ոք չ'օգնեց խեղճ Յիսուսին:

Հաց Գողգոթա, լաց քո վրա

Փրկիչն ուղիղ քեզի կուգայ.

Ծանր խաչը ուսին վրա,

Գոյն ներկուած արիւնլուայ:

Լեռների մէջ դու վիճակուար

Տեղ տանջանքի քո Արարչին.

Խոնչու այգսկէս անբաղդ ծնար

Որ խաչ տնկեն քո գազաթին:

Մեր մեղքերը լեռի նման

Դարսուած էր խաչի վրան,

Անտանելի այդ ծանրութեան

Ընկաւ գետին երրորդ անգամ:

Խոնչ ցաւ ըզգաց մայրն այդ կէտին,

Գետին ընկած տեսաւ որդին.

Անբուժելի խոց հինդերորդ

Դրօշմեցաւ մէջը սրտին:

„Ա՛խ, իմ որդեակ, ցօղ երկնային,

“Քո արիւնով թրչէ հողին.

„Որ մեղմանայ սիրտ մարդկային

“Էլ չըտանջեն մի անմեղին“.

„Իմ ճառագայթ լոյս աշխարհի

„Մեղաց բժիշկ դու իմ որդի,

„Իմ աղանձի քեզ թռուցի

„Չհորս ծոցս ես մնացի:“

Մի մարդ գտան մէջ ամբոխին

Անունը Սիմօն Կիւրենացի.

Դո՛ւ այս խաչին օգնես պիտի,

Մինչ գազաթին Գողգոթայի:

Հասաւ իսկոյն ուրախութեամբ

Հէնց այդ էր իւր սրտի բաղձանք,

Տուեց ուսը տակը խաչին

Թեթևացուց բեռն Յիսուսին:

Բիւր երանի Սիմօն քեզի

Որ խաչակից եղար Փրկչի

Թող մարդիկներ քեզնից սովորին

Որ խեղճերուն շուտով հասնին:

Յիսուս երբոր ծանր բեռին

Թեթևութիւն զգաց անձին,

Արժանացար դու մեծ փառքին

Տեղ կայ քեզի մէջ զրախտին:

Կանգնիր արև քո կամարին

Ասան լուսնին ու աստղերին

Թող շրջաժին գոնէ մի ժամ

Պէտք էր այն, վկայութեան:

Երբոր ոսները միացուցին զսօս սոսով՝ մագաձ
 Ուշքը զնայ մայր ծնողին,
 Խոց վեցերորդ տակեց սրտին
 Աւաղ զաւակ իմ միածին
 Ահա խաչը մեզ փրկութեան
 Կանգնեցուցին լեռ Դողգոթան
 Աւաղակաց ի մէջ տեղւոյն
 Արժան տեսան Աստուած որդւոյն:
 Յիսուս տեսաւ Յովաննէսին չէզ ճարմա գոց
 Որ կանգնած էր մօտը խաչին,
 „Կին զո՛ւ“ ասաւ. „Ահա որդիդ“ մասաւ
 Նրան ասաւ. „Ահա մայր քո“:
 Ինչ ցաւ զգաց Յիսուս մեր Տէր,
 Երբ մեխեցին ձեռներ ոտներ.
 Պապակեցաւ Փրկչի լեզուն,
 Խնդրեց մի ջուր իւր սիրելւոյն:
 Դահիճք տուին քացախ լեղի,
 Որպէս դաղարում ցաւերի
 Յիսուս խմեց տեղը ջրի,
 Ըսաւ. „Բոլորը թող կատարուի“:
 Դարձուց աչքեր զէպի երկինք
 „Նայէ վերաս, Դու, իմ Հայրիկ
 „Կատարեցի ես Քո Հրաման
 „Առ քո ձեռքդ հոգիս միայն:“,

Դողաց երկիր, աստիկ ցնցում
 Կատարուեցաւ այդ կէտին
 Երբ Տէր Յիսուս իւր Տիրոջը
 Աւանդեց իւր սուրբ հոգին:
 Ահա մթնեց երկնակամար.
 Ո՛ւր է լոյսը արեւի,
 Աշխարհ բոլոր պատեց լաւար
 Ո՛ւր է լոյսը լուսինի:
 Մօտ էր ժամը ուղիղ վեցին,
 Մայր երկընքի երեսին,
 Քաշեց սև բող, որ շտեմնի
 Անդութ ծնուած հողադնդի:
 Վերից ի վայր պատառեցաւ
 Վարագոյրը տաճարի,
 Գերեզմաններ ո՛հ բացուեցան,
 Տեսան սուղը աշխարհի:
 Ո՛ւր է աստղեր փայլուն սիրուն,
 Այս երկնային կամարում.
 Հեռացեր են մթան մէջը,
 Ո՛հ մէկը չի երևում:
 Պայծառ արև իւր լոյս զէմբին
 Սև բող ծածկեց երեսին,
 Գիտենալով փրկչի մահը
 Լոյս խնայեց աշխարհին:

Մութ էր երկինք մօտ երեք ժամ
Լուսնի գէմքը արիւնոտ
Կուղէր յայտնել նա աշխարհին
Փրկչի մահու տխուր բօթ:



<< Ազգային գրադարան



NL0375290

60382

